ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0025, Մխիթար Հերացի 12 Հեռ. (+ 374 12) 80 80 83
Էլ.փոստ/ E-mail info@ncdc.am

20.02.2025 N ՍԱ//01/8-1/828-2025

«ԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԻՎԱՆՅԱՆԻՆ
(Էլ.փոստ՝ ivapharm89@gmail.com)

Հարգելի՛ պարոն Իվանյան,

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Իվաֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 16.10.2024թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2024-03-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր կողմից ստանձնվել էր ջրծաղիկի դեմ պատվաստանյութի (այսուհետ՝ Ապրանք) մատակարարման պարտավորությունը՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող №1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա վճարման ժամանակացույց հաստատելու մասին համաձայնագիրը «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Իվաֆարմ» ՍՊԸ միջև կնքվել է 20.11.2024թ.-ին, դրանով իսկ Պայմանագրի կատարման վերջնաժամկետը սահմանվել է 20.12.2024թ.:

2024թ. նոյեմբերի 20-ին պատվաստանյութը հանձնելու նպատակով «Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի պահեստ է հանձնվել՝ ըստ ներկայացված փաստաթղթերի

ընդամենը՝ 24,040 դեղաչափ, սակայն խմբաքանակի տեղում հաշվարկի ժամանակ փաստացի առկա է եղել 24,009 դեղաչափ:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից Գնորդի պահեստ հանձնված Ապրանքի վերաբերյալ կազմվել է բացասական եզրակացություն, որի մասին ծանուցվել է «Իվաֆարմ» ՍՊԸ-ն՝ առաջարկելով մինչև Պայմանագրով սահմանված մատակարարման վերջնաժամկետը լրանալը վերացնել արձանագրված անհամապատասխանությունները և հանձնման նպատակով Գնորդին ներկայացնել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող №1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող Ապրանք:

«Իվաֆարմ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում դիմել է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին Պայմանագրի կատարման ժամկետը 30 օրով երկարաձգելու խնդրանքով, որը բավարարվել է, և կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, համաձայն որի՝ Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 20.01.2025թ., սակայն Վաճառողի կողմից այդ ժամկետը լրանալու պահին հանձնման նպատակով չի ներկայացվել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող Ապրանք:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հայտնում ենք, որ Վաճառողի կողմից Պայմանագրի կատարման ավարտի օրվա դրությամբ թույլ են տրվել հետևյալ էական խախտումները.

Ա) հանձնման նպատակով ներկայացված Ապրանքը չի համապատասխանում

Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնավորապես.

1) Տվիչներից արտածած տվյալներում դիտարկվել են կտրուկ տատանումներ 2-8°C սահմաններից՝ տվիչների ակտիվացման սկզբնական ժամանակահատվածում,

2) Ընդհանուր առկա 6 տվիչներից 4-ի արտածումներում գրանցվել են շեղումներ նաև տեղափոխման ժամանակահատվածում: Օրինակ՝ առաջին խմբաքանակի մեկ

տվիչում գրանցվել է 2 °C-ից ցածր ջերմաստիճան 15 օր տևողությամբ -0.1 °C-ից մինչև 1.9 °C ջերմաստիճանի միջակայքում,

3) Նախնական ժամանակահատվածին համապատասխանող ջերմաստիճանի տատանումները, ինչպես նաև 2°C-ից ցածր ջերմաստճան արձանագրած տվիչների արտածումները ներկայացված չեն եղել Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնին՝ իրականացվող փորձաքննության շրջանակներում,

4) Տվիչների ջերմաստիճանի մշտադիտարկման միջակայքը կարգավորված է եղել -29,5 °C-ից +29,5°C՝ 2-8°C-ի փոխարեն, ինչը թույլ չի տվել արձանագրել ահազանգ վերոնշյալ շեղումների ժամանակ,

5) Թվով 90 դեղաչափի երկրորդային փաթեթավորումն եղել է խոնավ, թրջված և վնասված վիճակում,

6)Պատվաստանյութի խմբային փաթեթավորման պատշաճ պիտակավորման բացակայությամբ պայմանավորված՝ հնարավոր չի եղել նույնականացնել, թե որ արկղերում են տեղադված եղել ջերմաստիճանային մշտադիտարկում իրականացնող տվիչները:

Բ) Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանող Ապրանք չի մատակարարվել Պայմանագրով սահմանված մատակարարման վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը՝ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Իվաֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 16.10.2024թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2024-03-1» ծածկագրով պայմանագրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍՏԵՓԱՆ ԱԹՈՅԱՆ